Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ ԱԿ-285 21.05 2025թ

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ–ի (այուհետ նաև՝ Վաճառող) միջեւ 2024 թվականի նոյեմբերի 20-ին կնքված N ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/52-2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) համաձայն 2025 թվականի ապրիլի 9-ին «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ մատակարարվել է Biobase BKQ-Z200H մոդելի ավտոկլավը՝ առանց ուղեկցող փաստաթղթերի, որի տեղադրման աշխատանքները «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ–ի ինժեների կողմից ավարտվել են ս.թ. մայիսի 5-ին, որից հետո միայն գործարկվել է BKQ-Z200H մոդելի ավտոկլավը: Փորձարկումն կատարվել է «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի ինժեների մասնակցությամբ, որի ընթացքում պարզվել է, որ ավտոկլավից հանված վիրաբուժական պարագաները խոնավ են՝ այսինքն չի իրականացվել կամ թերի է իրականացվել հետստերիլիզացիոն վակուումային գործընթացը: Ինժեների կողմից ավտոկլավն օգտագործող անձնակազմի ուսուցումը պատշաճ մակարդակով չի իրականացվել, ամբողջությամբ ցույց չեն տրվել և փորձարկվել ավտոկլավի բոլոր ռեժիմները՝ հատկապես ցույց չի տրվել «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ–ի եւ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի միջեւ կնքված ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/52-2 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրում նշված նախաստերիլիզացիոն վակուումային փուլի առկայությունը, չեն կազմվել անձնակազմի ուսուցման ավարտի և ավտոկլավի փորձարկման վերաբերյալ համապատասխան արձանագրություններ:

«ԷՔՍՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից որպես ուղեկցող փաստաթուղթ ներկայացված ECM (Ente Certificazione Macchine) կողմից տրված վերիֆիկացիան բացառապես վերաբերվում է արտադրող ընկերության կողմից տեխնիկական փաստաթղթերին և որում հստակ նշված է, որ ապրանքի որակի ստուգում չի իրականացվել և ներկայացված փաստաթուղթը չի կարող փոխարինել ապրանքի որակը հավաստող փաստաթղթին:

«ԷՔՍՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ–ի եւ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի միջեւ կնքված ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/52-2 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրի համաձայն մատակարարվող ապրանքատեսակը պետք է լինի 2024 թվականի արտադրության և ունենա ուղեկցող ձեռնարկ՝ անգլերեն, այնինչ Ձեր կողմից բնօրինակի փոխարեն ներկայացվել է տեղեկատվության բաց աղբյուրներում առկա 2023 թվականի արտադրության մոդելի օգտագործողի ձեռնարկի տպված տարբերակը:

2025 թվականի մայիս 13-ին առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և Պայմանգրի 2.1.2 կետով այն է՝ «եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝ ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը. բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը», «ԷՔՍՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ին առաջարկվել է անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինել ողջամիտ՝ եռօրյա ժամկետում:

Սակայն սահմանված ողջամիտ ժամկետում «ԷՔՍՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել անհամապատասխանությունների շտկում, հետևաբար հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 8.11-րդ կետը «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ն միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը 1-ին չափաբաժնի մասով՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության «Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...», առաջարկվում է Պայմանագիրը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 5 օրվա ընթացքում «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570053952390100 հաշվեհամարին վճարել որակավորման ապահովման՝ 900,000 /ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովման՝ 600000 /վեց հարյուր հազար / ՀՀ դրամ գումարները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Կատարող Ա.Խաչատրյան
Գնումների բաժին
(+3741) 30 30 10 /4/